

իսկ Հայերն ու Պարսիկները կրկին և կրկին ծաղրած են այդ գաղափարը, ու միշտ պնդած են թէ որդեր էին որ կը շինէին այս կարմիր ներկը իրենց մարմինն, ներուն մէջ, և ոչ թէ տունկեր: Ու մեր նախահարք իրենց համոզումը շեշտելու համար Որդան կարմիր անունը տունին այս ներկին»:

«Հայաստանի կարեւոր արուեստներէն մին եղած էր այս որդին մշակումը: Անոր էզը տունկի տերեւին կը փակչի, հոն կը մեծնայ առանց շարժելու, և կարճ ժամանակի մէջ արեան պէս կը կարմրի: Մեր նախահարք քացախի շոգիով կը սպաննէին այս հասունցած որդերը, և արեւուն տակ չորցնելէ յետոյ կը փոշիացնէին զանոնք: Այս փոշին էր Որդան կարմիր»:

«Որդան կարմիր ծիրանիին նման հոչաւ կաւոր ներկ մը դարձաւ ատենօք: Թագաւորներու զգեստներն ասով կը ներկուէին: Գորգավաճառները լաւ գիտեն թէ հին Պրուսէլի ասուեղէնները, վարագոյրները, կարպետները և գորգերը միշտ նշանաւոր եղած են իրենց կարմիր գոյներուն աննկարագրելի գեղեցկութեամբը: Անոնց այդ գոյնը հին Հայաստանի որդան կարմիրն է»¹:

Մասնագէտ Պապասինեանի այս գրութիւնը պարզող, լուսաբանող ոչինչ ունի իր մէջ: Ան ի՞նչ ըսել կ'ուզէ արդեօք գրելով՝ Որդան կարմիրը ծիրանիին նման հոչաւ կաւոր ներկ մը դարձաւ ատենօք: Ծիրանիին ներկը ի՞նչ էր կամ ուրկէ՞ կ'արտադրուէր կամ ի՞նչ պատճառով որդանէն տարբեր կը նկատէ: Գալով որդանի մշակութեան և արտադրութեան մասին ի Հայաստան, ըստ իս, ան միջատածիրանիին ուրիշ երկիրներու մէջ մշակութեան և պատրաստութեան հետեցնելով է որ կ'ընէ, որովհետեւ եթէ բուն Հայաստանի որդանը ուսումնասիրած ըլլար պիտի չնկատէր զայն կաղնկարար տունկի արտադրութիւն, Հայաստանի որդանը կաղնիի հետ որ և է ատընչութիւն չունենալով: Որդանը Հայաստանի մէջ կարմիրներուն ամենահոչաւ կատարը չեղաւ, այլ կարմիրն իսկ էր և իրմէ

տարբեր կարմիր չէր գտնուեր, կարմիրին կամ որդանին տարբերող երանգներն էին շէկ, բոսոր, ծիրանի, եւն: Ասկէ զատ Պ. Պապասինեան ի՞նչ բանէ հետեցնելով կը կարծէ որ Հայաստանի կարմիրը յաջորդեց ծիրանիին, ի՞նչ փաստ կայ կարծելու որ ծիրանին կարմիրէն կամ որդանէն հին է:

Բայց նոյնիսկ 1843ին, «Բազմավէպ»-ի ծանօթ էր թէ «ընդհանրապէս յայտնի եղած է հիմա որ երկու գլխաւոր տեսակ է այս որդը, մէկը սէզլի վրայ կեցող, մէկը կալը ուրիշ թուփերու ու ծառերու: Սէզլի վրայ կեցող որդը ինչուան հիմա միայն Հայաստան՝ ու Լեհաստանի մէկ քանի տեղուանքը տեսնուած է, թէպէտ Հայաստանինը Լեհաստանինէն ալ տարբեր կ'երեւայ: Բնապատումները այս երկուքին վրայ ալ զեռ աղէկ տեղեկութիւն չունին»²:

Այսպէս մինչև 1890 թուականը պէտք էր սպասէինք այս թանկագին որդին և իր հանած գոյնին մասին աւելի բան մը իմանալու համար: «Այրարատ աշխարհի սեւ փականագոյն և հոչակաւոր բերքերէն մին է Որդն կարմիրոյ, որուն գեղեցիկ կարմրատեսիլ գոյնը թէ զարդարանաց եւ շքեղութեան կը ծառայէր, և թէ մեծ շահու աղբիւր էր Հայոց համար, վասն զի այդ օգտակար ճճին՝ բնաւ չէր գտնուեր մերձաւոր աշխարհաց մէջ: Թէպէտ զանազան տեղերու մէջ շատ տեսակներ կան այս որդիս, այլ յետըտպա միայն Լեհաստանի մէջ կը գտնուի ընտիր (Coccus Polonicus) և ամենէն աւելի նմանը հայկականին, իսկ Մեխիգոյէն առատութեամբ կը բերուի այս ճճիս, սակայն աւելի փոքրագոյն է և ոչ շատ ընտիր»³: Հայկականը՝

1. «Կոչնակ», 1927, էջ 396: «Ներկ արտադրելու արուեստին պատմական հետաքննարք» - Վ. Ս. Պապասինեան, ի Լըհայ համալսարան:
 2. Արդեօք կարելի է կասկածիլ որ Հայաստանէն եկող զաղթականութեանց հետ միասին հոն տարուած ըլլայ, ուր ժամանակին հետ վատասերած ու տարբերած է Հայաստանինէն:
 3. «Ա» որդին արուն խիտ պղտիկ է, իսկ էզը ինչուան ոսպի չափ ու աւելի մեծ ալ կ'ըլլայ: Արուն մէկ ամսէն աւելի չ'ապրիր. իսկ էզը 1000 կամ 2000 հաւ: